

Կարո Մեղիքսեթյանի բանաստեղծության ուրվագծեր

Վաղերի Փիլոյան

Հանգուցային բառեր. թեմա, վերհուշ, ժանր, սիրերգություն, սոնետ, սոնետների պսակ, ժառանգորդություն

Նախաբան

Անցավորի ապրածի հետագիծը իր թողած վաստակն է: Ապրել է բանաստեղծ Կարո Մեղիքսեթյանը՝ թողնելով մեկուկես տասնյակից ավելի բանաստեղծական ժողովածու, նաև անտիպ, դեռ գրքի շապիկ չտեսած գործեր: Այսօր նա անցած կյիներ ութսունի սահմանագիծը: Առաջինը «Ադամամուխ» փոքրիկ ժողովածուն է, որ հայտ է, բանաստեղծի գոյությունն ու ներկայությունը հավաստող վկայություն:

Ճանապարհի սկիզբ

Ընդհանուրի ու առանձնահատուկի յուրահատուկ սինթեզ կա «Այս կաղնին...» սկսվածքով բանաստեղծության մեջ, որ նաև ժամանակի ընթացքն է ներառում. «Այս կաղնին մինչև կաղնի դառնալը /Մի օր եղել է /Այն գաճաճ ծառերի, /Այն մացառների /Ու փոքրիկ թփերի հասակին: /Ու եթե այսօր մի բան է նրանց կապում, /Այն է, /Որ այս կաղնին մինչև կաղնի դառնալը /Մի օր եղել է /Այն գաճաճ ծառերի, /Այն մացառների /Ու փոքրիկ թփերի հասակին» [1, 8]:

Բանաստեղծի ինքնությունը բացահայտվում է առանձին տողերի ու պատկերների օգնությամբ: Այսպես. «Իմ գյուղը» գործում «տներն են այն հին քարից, /որով իրենք են հենց շարված» [1, 17], «Կացին» գործում՝ «Ես միշտ նույնն եմ մնում, լոկ կոթերն են փոխվում» [1, 22]:

Այս բանաստեղծական երախայրիքի մեջ կան նաև գործեր, որոնք ոչ թե կենսական փաստի, կյանքի իրողության ազդակ ունեն, այլ միջնորդավորված տպավորությունների արդյունք են: Այդպիսին է ««Բուլերո»-ի տակ» [1, 10] երկը:

Եթե առաջին ժողովածուի մեջ ազդեցությունները բնական են, ապա պարտադիր պիտի լինեն սեփական ներաշխարհի ու մտածողության ծնունդները. «Աղեղից է կախված գորությունը նետի, /Կաղնու բարձրությունը՝ արմատների ց: /Կրած տառապանքով է իմաստությունը չափվում /Եվ սերը եղածին՝ կորցնելով» [1, 28]: Կամ՝ «Հավատալու համար նո՛ր աստվածներ են պետք, /Կարոտելու համար՝ հավատարիմ մի քար, /Եվ չընկնելու համար՝ աշխարհ է պետք: /Միրտ բացելու համար հարկավոր է

մի սիրտ, /Վշտանալու համար՝ հորիզոնիդ լայնքը, /Իսկ մեռնելու՝ համար, մեզ հերի՛ք է նաև /մեր այս կյանքը» [1, 29]:

Երեք սերունդների հերթագայությամբ և դեպքուդիպվածի փաստմամբ առարկայանում է ժամանակը, որ ոչ միայն այս տոհմինն է, այլ նաև ժողովրդինը: Եվ փաստվածը դառնում է այդ ժամանակի ստվերը՝ պատմությունը. «Պապիս խփել են /իր իսկ բաց արած խոնավ ակոսում, /Հայրս հնձից է կոհիվ գնացել: Մնացել են ես» [1, 30]:

Կյանքի ու մահվան, կյանքն ու մահը կրողի իմաստավորման յուրահատուկ ասք է այս փոքրիկ բանաստեղծությունը. «Թաղում է: /Մեռնելուց առաջ ժպտաց: /Նրանից առաջ ծնվում էր: /Նրանից առաջ... /Ոչինչ էլ չի պատահել: /Նա, որ ամեն օր իր մի օրն էր թաղում, /Այսօր վերջացրել է իր բոլոր օրերը: /Թաղում է: /Այնքան՝ բնական ու աստվածամոտ, /Որքան նրա ծնունդը» [1, 31]:

«Աղամամություն» հետո տասը տարի պահանջվեց, որ լույս աշխարհ գա երկրորդ՝ «Ոսկե ափ» ժողովածուն, որ ծնունդ է խոհերի, զգայնությունների, հուշերի: Ասես Ավ. Իսահակյանի քնարերգության հեռավոր ներկայությունն ենք զգում այս հատվածում. «Հետո կգա մայրամուտ /Առանց խանդի ու ցավի, /Ուր ամեն հուշ ու կարոտ /Յավ ու մրմուռ կբերի: /Մինչև որ մութը կընկնի, /Եվ արցունքով աչքը լի /Սև ձիավորը սարից /Ինձնից սև լուր կբերի» («Ճանապարհ» [2, 16]):

Բանաստեղծն ավելի հաճախ իր մանկության հուշ ու հիշատակների հետ է (տարիքն առնելու նշան է). այդ մանկությունը համեմատության անզիտակցական եզր է ապրած ներկայի նկատմամբ: Սա նաև ներքուստ ձևավորված բողոք է.

«Երանի առավոտ բացվի, /Օանրաթաթ մահակս առնեմ, /Կուշտ խմեմ առվի պաղ ջրից, /Յուլերս արոտի տանեմ: /Ճամփեքին ինքս ինձ գոռամ, /Քարափին բարի լույս ասեմ, /Մինչ գոտիս ամպի մեջ խրված /Ամպերի կիրճերով վազեմ: /Վազեմ սրինգս բարակ՝ /Մարերի ձյունների կարոտ, /Օաղիկներն ու հովը վազեն, /Փաթաթվեն ոտքերիս շաղոտ: /Երանի առավոտ բացվի, /Ինչպես հին հեքիաթում անմեղ, /Աչքերս մանկությամբ լցվի /Ու կյանքս... վերջանա այդտեղ» («Երանի» [2, 21]):

Ժամանակի անդարձության զգացողությունը կա ոչ միայն այս, այլ նաև «Կար աշխարհում մի խեղճ մանուկ» [2, 18-19], «Համբերություն» [2, 15], այլ գործերում:

«Ինքներգությունը» ոչ թե ինքնագովք է, որպիսին կարող ենք պատկերացնել միայն վերնագրի պայմանականությամբ, այլ իր մասին երգ՝ ո՛չ առավելական, այլ նվազական բաղդատականի իմաստով.

«Ես կամի տակ ընկած /Մաշված չեչոտ քար եմ, /Մազ չտեսած լար եմ /Ու վերջին պար: /Ես չսկսված դար եմ, /Մարի կարոտ քար եմ, /Ինձանով մեկ ահ եմ /Ու կիսատ բառ: /Ինչ ունեի կյանքում /Անտեր տերը տարավ, /Շունն ու գելը տարավ /Առանց դարձի: /Եվ այքերիս առաջ /Ինքս էլ չհասկացա, /Թե տաք անձրևն ինչպես /Փոխվեց լացի: /Բայց ստեցի որքան, /Միրտս այնքան սիրեց, /Էլ չգիտեմ՝ թե ում /Դուռը բանամ, /Հանգի՛ստ թողեք դուք ինձ, /Ես մենա՛կ եմ ծնվել, /Եվ մենա՛կ էլ կյանքից /Կհեռանամ» [2, 22]:

Կարո Մելիքսեթյանի սիրերգությունը

«Ոսկե ափ» ժողովածուի մեջ տեղ գտած «Ես քեզ սիրել եմ աշխարհ չեկած» բանաստեղծությունը կարելի է համարել Կ. Մելիքսեթյանի սիրալիկ բանաստեղծության սկիզբն ու հաղթանակը: Մինչ այդ կարող ենք խոհ տեսնել, ինչ-ինչ եկամուտ ազդեցություններ, սակայն սրանով սկզբնավորվում է նոր ասելիք ու ակոս, որ շարունակվելու է հաջորդելիք ժողովածուներում: Եվ վերաբերելու է մեղավոր սիրուն, գողացված սիրուն, նվաճված ու ավարառված սիրուն, Միրո՛ւն, ինչի վկայությունն է հաջորդ «Խոտի երգը» ժողովածուն թերևս ամբողջությամբ: Ժողովածուն սպասման ու կուտակումների արտահայտություն է, որ ներառում է նաև վարպետանալու դասեր, թեմատիկ զարգացումներ, մասնավորապես սիրո թեմայի զորացում ու խորացում: Բնության, բնապատկերի ու խոհի կողքին էական ու նկատելի են դառնում սիրո արձարծումները: Ահավասիկ.

«Թե կարող ես դու ինձ ներիր, /Թե կարող եմ՝ ներեմ ես քեզ, /Դու իմ գլխին այս ի՞նչ բերիր, /Եվ քո գլխին ի՞նչ բերի ես:

Մա ոչ ձյուն է, ոչ էլ՝ անձրև, /Ի՞նչ է թափվում այսպես, վերից, /Այսքան հպարտ, հոգնած ու խեղճ, /Բարձր ու հպարտ քո թևերից:

Իսկ մտովի՝ դու միշտ ինձ հետ /Ժամանակի թելն ես մանում, /Յերեկները ձերանում ես, /Գիշերները՝ ջահելանում:

Հայտնվում ես ուզած պահիս /Եվ շջնում ինձ բառերն այն, /Ինչ տենչացե՛լ եմ ողջ կյանքում, /Բայց չե՛մ լսել ոչ մի անգամ:

Եվ հենց քո այդ հայտնությամբ չէ, /Որ անցողիկ կյանքում այս հին /Մենք հավատա՛լ էնք սկսում /Անմահությանն ու դրախտին...» [3, 53-54]:

Այնուհետ սիրո երգն է դառնում էականը Կ. Մելիքսեթյանի ստեղծագործության մեջ, ծավալվում, ընդարձակվում՝ ընդգրկելով տեսանելի ու անտեսանելի, ակնկալելի ու անզգալի աշխարհը: Ի՞նչ խոհ կամ մտածում, ի՞նչ ապրում ու պայմանականություն. միայն սերը՝ աշխարհավեր ու աշխարհակործան, ցանկալի ու աշխարհաստեղծ: Կարո Մելիքսեթյանի բանաստեղծությունը մտնում է էրոսի համաստեղություն:

«Դժվար հալոցք» ժողովածուն սրա վկայությունն է, հատկապես համարյա առաջին «Արալեզներ» երկը.

«Այնպե՛ս եմ ուզում արալեզների /Ու դահճի՛ տեսքով՝ բիրտ ու աներես, /Քեզ մի՛շտ սպանել ամեն երեկո, /Ամե՛ն առավոտ՝ հարություն տալ քեզ» [4, 4]:

Նման զգացողության արձագանք ունենք Վ. Թեքեյանի մոտ.

«Ինչպես տիրեց Շամիրամ իրմե փախչող Արային,

Ես երազիս տիրեցի՝ սպանելով զանիկա» [5, 53]:

(Միջանկյալ նշենք, որ Վ. Թեքեյանի հետ հոգևոր ժառանգորդությունը փաստվում է նաև «Ոսկե սայլը» տաղի՝ «Վահան Թեքեյանի հիշատակին» նվիրաբերմամբ, որ ավարտվում է տպավորիչ պատկերով.

«Ելնում է Մայլը ոսկե ճաղերով, /Ոսկի եզներ են, ոսկի սամոտիք, /Վերում կայծակն է, ներքևում՝ անդունդ, /Մահը հեռու է ու հույսը՝ մոտիկ» [6, 44]):

Միրո մոտիվն ավելի է զորանում ու ահագնանում «Փարավոն», «Ամագոնուհին», այլ երկերում.

«Որպես փարավոն՝ հասնում են ինձ /Հազար աղջիկներ գեղեցկատես, /Բայց... բախտս բերեց, որ ես ընդմիշտ /Այն հազարի տեղ՝ ընտրե՛լ եմ քեզ» [4, 6]:

Կամ՝ «Ոչ կարող եմ անունդ տալ, /Ոչ՝ առանց քո անվան ապրել, /Ոչ՝ հանդգնել՝ դուռդ բանալ, /Ոչ քո դռնից ինձ դուրս հանել» («Խելահեղ խաղ» [4, 9]):

Այստեղ էլ արձագանք կա հայրեններից.

«- Ատ վո՛վ է երդիկս եկեր, //Որ օտար հողըն կու սողայ.

Թե իմն ես՝ նա վա՛ր արի, //Թե օտար ծաղիկ՝ նա գընա՛ :

- Ո՛չ քուկն եմ՝ ի վար գալու, //Ո՛չ օտար ծաղիկ՝ գընալու.

Եկեր եմ ի քո սիրուտ, //Ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու» [7, 44]:

Կամ թերևս սա սիրո ծնած պայմանականությունն է՝ անզորանալը: Միրո անկրկնելի զգացողությունները կարող են կրկնվել դարերի ընթացքում, և սա է սիրո խելահեղ խաղը: Այդպիսին է նաև «Մեղքերի կղզին».

«Չզիտեմ՝ ինչպես եղավ, /Որ հանկարծ, անկախ ինձնից, /Ես քի՛չ-քիչ քեզ մոտեցա, /Դու քի՛չ-քիչ մոտեցար ինձ: /Եվ մինչև ուշքի գայինք՝ /Թե մենք այս ի՛նչ ենք անում -/Ակամա մեզ բռնեցինք /Մեղքի մութ թավուտներում: /Ուզեցի քեզից փախչել՝ /Ավելի՛ քեզ կապվեցի, /Ախր, ես այսքան փորձված, /Այս ինչքա՛ն հեշտ խաբվեցի: //Ախր, ես ուրիշ մտքի, /Ոնց միտքս այսպես ծովեց, /Որ այսպես, օր-ցերեկով, /Ինձ մեղքի տեր դարձրեց...» [4, 10-11]:

Մեղքի տեր դարձնող Սերը գիտակցվում է, բայց ծնվում ու արձանագրվում է դրա մի նրբերանգը «Չեմ հիշում» բանաստեղծության մեջ.

«Գիտեմ, որ քեզ մոտ գալիս /Ես հարյուր մեղք եմ գործում,
Բայց հազա՛ր սեղք կգործեմ, /Թե հանկարծ ես քե՛զ չգամ» [4, 22]:

Այս զգացողությանը ներդաշն է «Քեզ սիրելը մեղք է, Չսիրելը՝ հանցանք» («Ռուբիկոն» [4, 34]) դրույթը:

Կ. Մելիքսեթյանը փորձում է ձևավորել պատկերային իր համակարգը: Այսպես է իրականացնում աչքերի բնութագրումը. «Ժպտում են նրանք ժամանակից դուրս /Ժամանակն ամբողջ իրենց մեջ առած» [4, 70]:

Ճանապարհի հաջորդ հանգրվանները. Ժանրի փորձարկումներ

«Ռժվար հալոցք» ժողովածուն կազմված է երեք շարքերից՝ «Մեղքի կղզի», «Գոյամարտ», «Սիզիֆ», որոնք ներկայացնում են սիրո, հայրենիքի, խոհի հեղինակային ընկալումներն ու իրացումները: Եվ եթե սերը հեղինակի հոգում է, հայրենիքը՝ իր տեղում, ապա խոհն ավելի հաճախ ծնվում է կյանքի վայրիվերումներից ու սրանց իմաստավորումից.

«Իր ճշմարտությունն ունի ամեն ոք – /Թե շանթն անողոք, /Թե նրա զարկից հրդեհված ծառը, /Թե առյուծն անհոգ, թե նրա ճանկում մեռնող այծյամը: /Իր ճշմարտությունն ունի ամեն ոք՝ /Այս սարն, /Այս ձորը, /Բայց կյանքի կոժվում /Հաճախ են, արդյոք, սարի ու ձորի, /Գող ու արդարի, խեղճ ու զոռբայի /Ճշմարտություններն իրար հետ բռնում» («Ձույզ ճշմարտություն» [4, 137]):

Այս ճշմարտությանը մեկ էլ անդրադարձ կա. «Ճշմարտությունը... /Երբ ժամանակից առաջ են ասում՝ /Այն հավասար է դավաճանության, /Իսկ երբ ասվում է ժամանակի՛ց ուշ՝ /Արդեն ոչ մեկին այն պետք չէ բնավ: /Ճշմարտությունը ճշմարտություն է, /Ժամանակին են երբ որ այն ասում /Եվ աչքերը փակ իրենց ճակատին /Կամ դափնի, կամ էլ... գնդակ սպասում» [4, 144]):

Եթե ժողովածուի վերջին երկու շարքերում հեղինակը մնում է սովորականի ընկալումների շրջանակում, ապա առավել արժեքավոր է դառնում առաջին շարքը՝ սիրո իր յուրահատկությամբ, ապրածի ու ասածի ներդաշնակմամբ:

Կ. Մելիքսեթյանի «Սիրո շեմ. սաղմոսներ առ Վրաստան» գիրքը բացվում է «Գիրք ճանապարհի և անվախճան սիրո» խմբագրականով, և խմբագիր Պատ. Շաքարյանն այն կարծիքն է հայտնում, թե հեղինակը «հավերժ սիրո խոստովանանքի իր գրական ծանրակշիռ տուրքն է բերել առ Վրաստան:

Գրականության մեջ չեմ հիշում, և, հավանաբար, չկա նախադեպը, երբ մի բանաստեղծ ոչ թե բանաստեղծություն կամ բանաստեղծական շարք, այլ մի ամբողջ գիրք ստեղծի մի այլ ժողովրդի ու երկրի մասին, ինչպես այս ժողովածուն է» [8, 3]: Թերևս կարելի է վիճարկել այս դրույթը, բայց չես վիճարկի հեղինակի սերն առ Վրաստանն ու վրացին: Այս սերը հարգանք ունի իր մեջ, պատմության իմացությունն ու եղբայրության գիտակցում: Հաճախադեպ են նվիրաբերումները ինչպես գրական-մշակութային գործիչներին, այնպես էլ հանդիպած մարդկանց: Մակայն իր գործերում երբեմն հեղինակը հասնում է երկարաբանությունների, որ խանգարում են բանաստեղծական ռիթմի տրոփին, տեղ բացում խրատի ու դառնության համար: Գիրքը ենթավերնագիր ունի՝ «սաղմոսներ առ Վրաստան», որ փորձում է բացահայտել եթե ոչ ժանրային պատկանելությունը, ապա ժանրընտրության միտումը, իսկ ահա «Հարյուր և մեկ տաղ» ժողովածուի վերնագիրն արդեն ժանրը ի սկզբանե է մատնանշում: Տաղի հարատևումը մեր բանաստեղծության մեջ և տաղի արտահայտությունը Կ. Մելիքսեթյանի բանաստեղծության մեջ խոսում են ժառանգորդության մասին և մատնանշում հեղինակի համարձակությունը՝ ասպարեզ մտնելու այն դեպքում, երբ այդ ասպարեզի նախորդած հաղթողներ էին Նարեկացին ու Մայաթ-Նովան, Տերյանն ու Չարենցը, Թեքեյանն ու Շիրազը:

«Հարյուր և մեկ տաղ» ժողովածուի մեջ նկատելի են դառնում հեղինակի տազնապները՝ կապված արտագաղթի հետ, որ խժռում է հայ տեսակի ներուժը. «Փոխանակ՝ գա՛ն, գոր-գիշեր քարավաննե՛րն են գնում /Իրենց՝ երիցս խաչված /Հայրենիքից փախչելով» [6, 104]:

«Գոյամարտ» բանաստեղծությունն ասես մեր անցյալի ու ներկայի գուգակցումը լինի.

«Այստեղ տնքում է հող ու երկինք, /Արմատ ու ծաղիկ, վանք ու խաչքար,

Ու մեծ ու շքեղ մի Հայրենիք՝ /Մեծակորուստ ու մեծահանճար:
Այստեղ՝ ամեն ինչ գոյամարտ է, /Փնտրտուք՝ կորած հազար հույսի,
Անդուլ կռիվ է՝ ամեն վայրկյան /Մի հավերժաքայլ ու մեծ Լույսի:
Տարածությունը – այստեղ՝ չկա, /Այստեղ սլացք է ու թողություն,
Որտեղ՝ ամեն օր, իր սրբերին /Տերն սպանում է, մահը՝ դյուրո՛ւմ:
Մա հո երկիր չէ, խորան է մեծ, /Կառափնարան է՝ հույս ու բախտի,
Իր ամբողջ կյանքում, այսպե՛ս խրվա՛ծ – /Եվ դժոխքի մեջ, և՛ դրախտի:

***Սա խրախճանքի երկիր է վեհ, /Երգի՛, հանճարի՛ ու եղեռնի՛,
Ով կուզե հավերժ ապրել այստեղ՝ /Իր մահից առաջ պիտի մեռնի:***

Օ՛, գոյամարտի շքեղ ծաղիկ, /Դու մեզ տանջել ես դարե՛ր այնքան,
Բայց, հարազա տս, գիտե ս, որ մենք /Քո գոյությանն ենք միշտ
պարտական» [6, 88] (ընդգծումն իմն է՝ Վ. Փ.):

«Ոգի և հիշողություն» ժողովածուն անմիջապես ցուցանում է գրողի և ժամանակի միջև կապը, հիասթափությունների այն հորձանքը, որ գալիս է ապրած օրից, իրականությունից: Մրա ամենաբնորոշ արտահայտությունն է «Աղե շապիկ» բանաստեղծությունը, որ իր հետ բերում է սահյանական պատումի ու կառուցման զգացողությունների նկատելի շերտեր:

«Ինչ անեմ՝ թողնեմ ու գնամ, /Այստեղ ես անելիք չունեմ, /Երկիր իմ, էլ քեզ հետ արդեն /Առնելիք ու տալիք չունեմ: /Ջաղացս հեղեղը տարավ, /Աղունս՝ գելերը այս նոր, /Անտառում նստել ու ցրտին /Մի օրվա վառելիք չունեմ: /Ամե՛ն ինչ հերվա ձյուն դառավ, /Ոչնչի էլ կարիք չունեմ, /Իմ գետը՝ ամռան մեջ սառավ, էլ արև ու գալիք չունեմ: /Հին ու նոր շները՝ կցվել, /Աշխարհ են հոշոտում ողջ-ողջ, /Երկնքում էլ ոչ մի խաչ ու /Իմ երկրում Հայրենի՛ք չունեմ: /Ինձ աղե՛ շապիկ է մի օր /Հագցրել իմ տերը՝ ցմահ, /Հոգնե՛լ եմ Չարից ու Բարուց, /Հանելու էլ կարի՛ք չունեմ» [9, 5]:

Թե այստեղ պայմանականորեն մարդը կա տարածական չափումներում, ապա «Իմ գետն արդեն ետ է հոսում» բանաստեղծության մեջ մարդու և ժամանակի հարաբերակցությունը կա: Երկու տարբեր, իրար հակոտնյա վեկտորների ընթացքը կա, ուր ոչ միայն տարիքից, այլև ապրած ներկայից բացահայտ դժգոհությունն է փաստվում. «Ո՛ր եք կորել, ասե՛ք դուք ինձ, /Օրե՛ր՝ կարմի՛ր ու կանաչ, /Իմ գետն արդեն է տ է հոսում, /Ձերը՝ դեպի առաջ: /Օր կար, երբ քա՛ր էի սեղմում, /Ջո՛ւր էր կաթում քարից, /Դրսից օրվա համ չեն առնում /Եվ օ՛ր՝ օրվա՛ համից: /Օ՛ր, դարեր ես ուսիդ տանում՝ /Չոր գլուխդ գրկած, /Ինչո՛ւ տեսա, այ անօրեն, /Քե՛զ, ա՛յդ օրի ընկած: /Գոնե՛ ես քեզ չտեսնեի /Այդքան անգոր ու խեղճ, /Ընկած քեզնից ու քո բախտից, /Օ՛ր իմ, օր կա՞ քո մեջ: /Օ՛րդ կտրի, օ՛ր, քեզանից /Ինձ դո՛ւրս հանիր, գնա՛մ, /Երբ քո վրա դու հո՛ւյս չունես, /Ես ո՞նց հույսիդ մնամ» [9, 11]:

Վ. Մելիքսեթյանի «Այլ ժամանակ» ժողովածուն ներառում է մի քանի փոքրիկ պոեմներ՝ «Գիսաստղ», «Հեթանոսական», «Երեք հասակ», «Այլ ժամանակ», «Մի երեկո...», որոնք հարաբերման եզրեր ունեն ծավալուն բանաստեղծության և բալլադի հետ: Մրանք ավելի շուտ չափածո շարադրված պատմողական գործեր են, որ չեն ապահովում հեղինակի՝ առանձին բանաստեղծություններով հասած մակարդակը, որոնումների, նոր պոետական փորձերի ու ավելի շուտ ստեղծագործական որոնումների արտահայտություն են:

Հետո Կարո Մելիքսեթյանը հեռացավ այս կյանքից՝ թողնելով ձեռագրեր, որոնք կամաց-կամաց ընտանիքի ու մտերիմների համար ջանքով գրքեր են դառնում: Արդեն հրատարակվել են «Արևի տակ մահ չկա» և «Ոգու համաստեղություն» ժողովածուները:

Ըստ խմբագրի ծանուցման՝ «Արևի տակ մահ չկա» ժողովածուի նախօրինակն է հեղինակի անհեթեթ մահվան պատճառ դարձել (մահացել է ավտովթարից). նախօրինակը կորել է հրատարակչությունից, և ժամանակ անց, ըստ սևագրությունների, իրականացվել է հնարավորի և հավանականի սահմաններում այն վերականգնելու փորձը:

Ռեյ Բրեդբերին պատմվածք ունի՝ «Տարագիրները» (պատմվածքն ածանցվել է «Մարսյան քրոնիկոն» վեպից). օրենքը արգելք է դրել գրքերի վրա, և փրկվելու համար գրողները հանգրվանել են Մարս մոլորակում: Սակայն նրանց շարքերում կորուստներ են արձանագրվում. Բիրսի «մարմինը վերածվում էր գորշ կապտավուն մոխրի և ածխացած ոսկորների, մրի փաթիլները լողում էին օդում», քանի որ «Ձոհվեց նրա գրքի վերջին օրինակը: Ինչ-որ մեկը Երկրում հենց նոր այրեց» [12, 220]: Երկրից Մարս ուղևորված հրթիռը այնտեղ է տանում այլ հեղինակներից գրքեր, որոնք այրվում են խարույկի մեջ... Եվ գրքերի հետ անհետանում են հեղինակները, նրանց հետ անհետանում է Զմրուխտե քաղաքը: Ըստ էության գիրքը նաև այն արարողի հիշողությունն է, մարդու հուշը պահողը, գրքի կորուստը՝ նաև մարդու կորուստը, և որպեսզի չլինի այդ կորուստը, վերածնվել է Կ. Մելիքսեթյանի գիրքը՝ «Արևի տակ մահ չկա»: Համանուն բանաստեղծությամբ հաստատվում է Ռեյ Բրեդբերիի ձևակերպած պայմանաձևը. «Արևի տակ մահ չկա, /Թեկուզ ծածկի մշուշը, /Մարդն այնժամ է մահանում, /Երբ մարում է իր հուշը: /Իր ճեփ-ճեփմակ թներին /Մահն այնժամ է մեզ տանում, /Երբ քո միակ ու վերջին /Հուշ պահողն է մահանում» [11, 199]:

Այս գիրքը Կ. Մելիքսեթյանին է, սակայն ընթերցելիս երբեմն այն զգացողությունն են ունենում, թե գործ ունես իրոք սևագրի հետ, որովհետև հեղինակի պարտադրող ներկայությունը, խստապահանջությունը չես զգում, քանի որ հաճախադեպ են տաղաչափական բնույթի անհարթությունները, բանաստեղծական ոտքերի, ուրեմն նաև ռիթմի անկանոնությունները, ավելորդ կամ պակասող վանկեր... սրանք արվեստի արհեստը բնութագրող իրողություններ են, հարկ էր չըջջանցվելին:

Թեմատիկ առումով ժողովածուն եռափեղկ է՝ սեր, հայրենիք, ժամանակ, որ հաճախ զուգակցումներով են դրսևորվում:

Ամեն խոսք այն արտաբերողի, առավել ևս բանաստեղծի ինքնաբա-

ցահայտումն է, նրա էությունից ածանցվածը: Միրո կարոտ, սիրուց անկուշտ էություն է Կ. Մելիքսեթյանը. «Ամեն ինչից կուշտ եմ գնում, /Միրո ւց է, որ չկշտացա» [11, 53]:

Կարելի է բանաստեղծություն գրել ամեն ինչի վերաբերմամբ կամ ամեն ինչից ազդվելով, չնայած կան նաև բացառություններ: Այդպիսի բացառություն է դառնության (հուսահատության) և բանաստեղծության համատեղումը: Սակայն Կ. Մելիքսեթյանը փորձել է իրականացնել բացառության բացառումը.

«Աշխարհի վրա հնուց ի վեր, /Այստեղ-այնտեղ և բոլորիվ, /Որտեղ հովի՛վ կա՝ չկան սարեր, /Որտեղ սարե՛ր կան՝ չկա՝ հովիվ: /Որտեղ վանքե՛ր կան՝ չի՞ք աղոթող, /Բսկ ուր աղո՞թք կա՝ և ոչ մի վանք, /Ոչ աղոթք, ոչ վանք ու ոչ էլ մենք /Ճիշտ ժամանակին աշխարհ չեկանք: /Հովիվներն այն, որ սարեր չունեն, /Եվ սարե՛րն այն, որ չունեն հովիվ, /Թագավորնե՛ր են բոլորն այնտեղ, /Բսկ հոտը մորթված է բոլորիվ» [11, 28]: Սա մեր ժամանակի պարտադրա՞նք է, հեղինակի՞ ապրածով հասած հանգրվանի՞, թե՞ այլ ազդակ ունի, սակայն առասպելի «Ես ավերակացս ում թագավորեմ» դրույթն է ցավոտ արձագանքվում: Նաև այս բանաստեղծությամբ է Կ. Մելիքսեթյանը դառնում իր ժամանակի վավերագիրը:

«Ոգու հավերժություն» ժողովածուն ներառում է պոեմներ, ասքեր, ավանդություններ, որ ունեն տարբեր ժողովուրդների անցյալին ու առասպելին վերաբերող հիմքեր: Այդ գործերը վկայում ու հաստատում են, որ էպիկական երկերը հեղինակի հաղթաթուղթը չեն, որ ***նա առաջին հերթին քնարերգակ է***: Մի կողմից չափածոյի միջոցով էպիկական պատումի խոչընդոտների հաղթահարումը արվեստի այլ իրողություններ է ենթադրում, և մյուս կողմից պոեմի ժանրի ձեռքբերումները հայոց մեջ ենթադրում են հաճախ անհաղթահարելի չափ ու մակարդակ: Սակայն սա ամեննին չի ստվերում Կ. Մելիքսեթյանի վաստակը և այս ժողովածուի մեջ տեղ գտած գործերը:

Նկատենք, որ գրքում տեղ է գտել բանաստեղծական բարդագույն մի ժանրի՝ սոնետի, և սոնետների շարքի թերևս ամենադժվար տարբերակի՝ սոնետների պսակի իրացում: Սոնետն ունի ինքնադիմադրության մեծ ներուժ, և նրան դիմելիս ամեն մի բանաստեղծի կարողությունների սահմանն է կանխորոշվում: Այստեղ էլ ունենք արդեն դասական դարձած նվաճումներ, ինչպիսիք են Մ. Մեծարենցի ու Վ. Թեքեյանի, Վ. Տերյանի ու Ե. Չարենցի գործերը, սոնետների պսակի դեպքում ձեռքբերում են Հ. Էդոյանի ու Դ. Հովհաննեսի (նաև այլոց) գործերը: Կ. Մելիքսեթյանի

սոնետների պսակը որոնումների ու համառումների առհավատյա է, ժանրի դիմադրությունը հաղթահարելու հեղինակային ջանք ու հանդգնություն:

Այսօր այսքանը: Սակայն այս անդրադարձը մի էական միտում ունի՝ փորձելու տեսնել Կ. Մելիքսեթյան բանաստեղծի տեղը 20-րդ դարի երկրորդ կեսի ու 21-ի առաջին երկու տասնամյակների հայոց բանաստեղծության համապատկերում ու նրա բերած նպաստը: Թերևս լինեն այլ անդրադարձներ ոչ միայն այս հեղինակի, այլ նաև այլոց գործ ու վաստակին, որ մի քիչ պարզորոշվի արևի տակ նրանց գոյության իմաստավորումը:

Գրականություն

1. Մելիքսեթյան Կ., Ադամամուրթ, Երևան, «Հայաստան» հրատ., 1967:
2. Մելիքսեթյան Կ., Ոսկե ափ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977:
3. Մելիքսեթյան Կ., Խոտի երգը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982:
4. Մելիքսեթյան Կ., Դժվար հալոցք, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1990:
5. Թեքեյան Վ., Հատընտիր, Երևան, «Հայաստան» հրատ., 1970:
6. Մելիքսեթյան Կ., Հարյուր ու մեկ տաղ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2001:
7. Հայրեններ, աշխ.՝ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 1995:
8. Մելիքսեթյան Կ., Սիրո շեմ. սաղմոսներ առ Վրաստան, Երևան, «Վան Արյան» հրատ., 2000:
9. Մելիքսեթյան Կ., Ոգի և հիշողություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002:
10. Մելիքսեթյան Կ., Այլ ժամանակ, Երևան, «Ամրոց Գրուպ» հրատ., 2003:
11. Մելիքսեթյան Կ., Արևի տակ մահ չկա, Երևան, «Վան Արյան» հրատ., 2016:
12. Բրեդբերի Ռեյ, 451 աստիճան ըստ Ֆարենհեյթի, թարգմ.՝ Լևոն Անանյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
13. Մելիքսեթյան Կ., Ոգու համաստեղություն, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2018:

Контурсы поэзии Каро Меликсетяна

Валерий Пилюян

Резюме

Ключевые слова: тема, воспоминание, жанр, лирика, сонет, венок сонетов, наследственность

Поэт Каро Меликсетян оставил более полутора десятков сборников стихов, в которых отражены поиски автора, проблемы жизни и смерти, необратимости времени, Родины и ее тревожного состояния, истории и эмиграции, любви и раздумий, чувств и воспоминаний. Он в первую очередь лирик и утверждает начало нового слова и новых коллизий, связанных с греховной, украденной, побежденной и расхищенной любовью. Автор пытался обрести себя в разных жанрах: песне, псалме, сонете и т.д. Сонет обладает огромным потенциалом самосопротивления, и при обращении к нему заранее определяется предел возможностей каждого поэта, а венец сонетов – залог исканий и настойчивости, авторских усилий и смелости в преодолении сопротивления жанра.

Sketches of Karo Meliksetyan's Poetry

Valery Piloyan

Summary

Key words: theme, remembrance, genre, love song, sonnet, crown of sonnets, inheritance

Poet Karo Meliksetyan left more than one and a half dozen collections of poems, which are records of the author's search, life and death, the return of time, his homeland and his anxieties, history and emigration, love and thought, feelings and memories. In particular, he is first and foremost a lyricist. He initiates a new saying and groove for sinful, stolen, conquered, and plundered love.

The author carried out a search for different genres: song, psalm, sonnet, etc. The sonnet has a great potential for self-resistance: the limit of each poet's abilities is predetermined when addressing it; and the crown of sonnets is a guarantee for the search and perseverance, authorial effort and audacity to overcome the resistance of the genre.

Ներկայացվել է 17.10.2021 թ.

Գրախոսվել է 14.10.2021 թ.

Շնորհանվել է տպագրության 29.11.2021 թ.